



«ՄԻԶՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԱԿՅՈՒԹՅՈՒՆ» ԲԱՂԱԴՐԻՉ 2-Ի ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

խոշորացված համայնքներում եվ համայնքների խմբերում ենթածրագրերի իրականացման

Հայտերի ընդունելիության չափանիշները

Միջհամայնքային սոցիալական եվ տնտեսական զարգացման նախաձեռնությունների աջակցություն բաղադրիչի շրջանակներում խոշորացված համայնքներից կամ համայնքների խմբերից ստացված ենթածրագրերի հայտերը պետք է համապատասխանեն ՀՏՁՀ կողմից սահմանված իրավունակության հայտանիշերին, որոնք ներկայացված են ստորև՝

- դիմող համայնքների խումբը իրավունակ է, և նախաձեռնող խումբը ստեղծված է ըստ ՀՏՁՀ-ի կանոնակարգի (տե՛ս Նախաձեռնող խմբի ստեղծման կարգը փաստաթուղթը՝ կցված հայտերի ընդունման հրավերին),
- դիմող համայնքների խումբը/միավորված համայնքը ներառում է առնվազն մեկ համայնք խիստ խոցելի կամ խոցելի խմբերից
- հայտը պատշաճ կերպով կազմված և ստորագրված է, իսկ պահանջվող փաստաթղթերը կցված են,
- հայտում ներկայացված խնդիրը համապատասխանում է ՄՆՏԶ Ծրագրի ենթածրագրերի/բաղադրիչների տեսականուն (տե՛ս «Ֆինանսավորվող ենթածրագրերը և բաղադրիչների տեսականին» փաստաթուղթը՝ կցված հայտերի ընդունման հրավերին),
- եթե որևէ բաղադրիչ ենթածրագրի ենթադրում է ՀՏՁՀ-ի կողմից որևէ հողատարածքի ձեռքբերում կամ հարկադիր վերաբնակեցում, ապա բոլոր այլընտրանքները ուսումնասիրվել են՝ խուսափելու կամ նվազագույնի հասցնելու այդպիսի ազդեցությունները, և ակնկալվող ազդեցությունները (հողատարածքի, կառույցների, ակտիվների, ապրուստի միջոցների վերաբերյալ) մանրամասնորեն նկարագրվել են:
- ամեն մի ենթածրագրի համար Համաշխարհային բանկի վարկային միջոցների ակնկալվող առավելագույն մասնաբաժինը պետք է կազմի 550,000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամից ոչ ավելի: Այլ աղբյուրներից համաֆինանսավորման չափը չի սահմանափակվում:

Վերոհիշյալ ընդունելիության չափանիշներին չհամապատասխանելու դեպքում հայտը մերժվում է:

01/08/2017թ.